

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Տօն Երեւման Սուրբ Խաչի 351 թ.

Հայ Առաքելական Ս. Եկեղեցին տարին չորս անգամ կը տօնէ մեր Տիրոջ փրկագործ խաչի՝ քրիստոնեաներու պարծանքի տօնը: Սուրբ Խաչի մեծ եւ առաջին տօնը կը տօնախմբուի սեպտեմբեր ամսուայ 14րդ օրուայ մօտիկ կիրակի օրը եւ կը կոչուի «Խաչվերաց»: Խաչի երկրորդ տօնը կը կոչուի «Գիտ Խաչ», երրորդը՝ որ այս տօնն է եւ կը կոչուի «Տօն Երեւման Սուրբ Խաչի», իսկ չորրորդը կը կոչուի «Տօն Վարագայ Սուրբ Խաչի»: Այս տօնը «Սուրբ Խաչի երեւման տօն» կը կոչուի, որովհետեւ Քրիստոսի խաչելութենէն ետք 351 թուականի մայիս 7-ին, օրուայ երկրորդ կէսին, Երուսաղէմի երկնքի վրայ տարածուած կը տեսնուի Սուրբ Խաչի նշանը, որը կը սկսեր Գողգոթայի բարձրունքէն մինչեւ Ձիթենեաց լեռը: Այդ օրերուն Երուսաղէմի հայրապետը Ս. Կիրեղն էր, եւ Հռոմի կայսրը Մեծն Կոստանդիանոսի որդի՝ Կոստանդինն էր: Տիրոջ նշանը իր փայլով կը յաղթէ արեգակի ձառագայթներուն եւ արծակած լույսով կը ծածկէ արեւի լոյսը: Այս ցոյց կու տայ թէ քրիստոնէութիւնը ամէնայ բարեպաշտն է բոլոր կրօններէն, ոչ միայն խօսքի իմաստութեամբ, այլեւ Հոգիի յայտնությամբ ու զօրութեամբ, քանզի կը պատմուի ոչ միայն մարդոց կողմէ, այլ այս հրաշքով վկայութիւն կը տրուի երկինքէն՝ Աստուծոյ կողմէ:

Քաղաքի բոլոր ժողովուրդը կը տեսնէ այս նշանը, որը երկար ժամանակ յայտնապես կերեւեր երկքնի վրայ: Այս տեսիլքին վրայ ժողովուրդը մեծ երկիւղով եւ ուրախութեամբ կ'աճապարէ եկեղեցի: Բոլորը՝ հրեաներ եւ հեթանոսներ, հիացած, միասնաբար փառք կու տային Խաչեալին եւ կը փառաբանէին ամենագոր Խաչը: Այդ օրը շատերը դարձի եկան եւ հաւատացին Քրիստոսին եւ մկրտուեցան Սուրբ Կիրեղ հայրապետի ձեռքով: Այս հրաշքով կատարուեցաւ Մատթէոս աւետարանիչի խօսքը որ կ'ըսեր «Եւ ապա երկնքի վրա Մարդու Որդիին նշանը պիտի երեւայ» (Մատթ. ԻԴ 30):

Այդ առիթով Սուրբ Կիրեղ նամակ մը կը գրէ Կոստանդին կայսրին, եւ ինչպէս որ իր հայրը՝ Կոստանդիանոսը, խաչի նշանով հաւատաց, այդպէս ալ Տերը կամեցաւ որ իր զաւակին վտանգուած հաւատքը այս նշանով վերականգնուի: Նոյնպէս եւ Իսրայելի որդիները, երբ Եգիպտոսէն դուրս եկան, թէւ ունէին Մովսէս մարգարէին որպէս իրենց առաջնորդ, սակայն տակաւին կարօտ էին Սինա լեռան վրայ լուսեղէն ամպի տեսիլքին (տես. Ելք ԺԹ 16), որը օրինակը եղաւ Քրիստոսի լուսապայծառ խաչին: Նաեւ Երուսաղէմացիները պէտք ունէին երկնային նշանով հորդորվելու, չնայած որ ունէին Մովսէսի նման քարոզիչի մը ու մեծ

առաջնորդ՝ Սուրբ Կիրեղ Երուսաղէմացին:

Լուսաւոր խաչը, ցոլալով Գողգոթայէն մինչեւ Ձիթենեաց լեռը, ցոյց տուաւ, որ այդ Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որ խաչուեցաւ Գողգոթա եւ Ձիթենեաց լեռէն ալ երկինք համաբարձաւ: Եւ այդ խաչի նշանն է որ կեանքնորդէ մարդկութիւնը դէպի Քրիստոս: Եթէ Յիսուս ուզեր, ապա այդ նշանը ամբողջ աշխարհին ցոյց կու տար, սակայն բաւարարուեցաւ միայն երուսաղէմացիներուն ցոյց տալով, որոնք ալ այն տեսնելով ապաշխարեցին: Իսկապէս, մեծ էր երկնային նշանը, որովհետեւ եթէ խաչելութեան ժամին արեգակի խաւարումը շարժեց հարյուրապետի սիրտը, եւ ան հաւատաց Քրիստոսին, ապա որքան անլի սիրտեր շարժեցան տեսնելով Սուրբ խաչի երեւման հրաշքը:

Մատթէոս Աւետարանիչը վերջին օրերումսին գրած է. «Նեղութեան այդ օրերէն անմիջապէս ետք արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի չփայլի. Երկինքէն աստղերը պիտի իյնան

եւ երկնային մարմինները պիտի սասանին: Ապա Մարդու որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ, եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն Մարդու Որդին, որ կու գայ ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով» (Մատթ. ԻԴ 29-30): Որովհետեւ անկարելի է որ մարդասէր Աստուած լքէ իր արարածները առանց նշան մը տալով անոնց: Այդ օրը Տէրը ցոյց տուաւ խաչի մեծ նշանը եւ անոր զօրութիւնը: Եւ խաչի զօրութեամբ կը դադրեցնէ սատանայի փորձութիւնները եւ մոլորուածներուն ճիշտ ճամբայ կը բերէ:

Իսկ ամենահաղթ խաչի նշանի երեւման հրաշքով Քրիստոս կը վերահաստատէ Եկեղեցին եւ մեր մէջ նոր կնիք մը դնէ, որպէսզի ինչպէս ինքը յաղթեց մահուան եւ դժոխքին, այդպէս ալ մենք յաղթենք աշխարհին եւ սատանային:

Հայ Առաքելական Եկեղեցին այս կիրակի, մայիս 7ին կը տօնէ Երեւման Սուրբ խաչի հրաշքը:

